

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2015 թվականի հունվարի 19-ի ընդհանուր ժողովի արձանագրությունից

Օրակարգ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավար Վահե Գրիգորյանի 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների տարեկան հաշվետվություն*

Ժողովին մասնակցում էին Արմավիրի մարզպետարանի Մշակույթի և Սպորտի բաժնի պետ՝ Արմեն Թովմայանը, դպրոցի, գյուղապետարանի և բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները, ավագանու անդամները և համայնքի թվով 32 բնակիչներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց 2014 թ-ի ընթացքում կատարված աշխատանքները և համայնքի բնակիչների ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ համայնքի բնակչության և գյուղապետարանի աշխատակիցների ջանքերի շնորհիվ կարողացել ենք մեր համայնքի սեփական եկամուտների գանձումները հասցնել բարձր մակարդակի վրա: Նշվեց, որ համայնքը սեփական եկամուտների մասով տարեկան պլանը կատարել է 100.0 %-ով, հողի հարկի մասով 100.0%, գույքահարկի մասով՝ 100.0%: Սակայն, չնայած մեր բնակչության հարկային պարտավորությունների կատարմանը, համայնքում դեռևս շատ չլուծված խնդիրներ կան, որոնք կարիք ունեն լուծման: Համայնքի ղեկավարը հույս հայտնեց, որ չնայած կյանքի տնտեսական իրավիճակի վատթարացմանը մեր համայնքի բնակիչները և գյուղապետարանի աշխատակիցները միահամուռ, համախմբված ուժերով կփորձեն քայլ կատարել նոր տարում իրենց համայնքի խնդիրների լուծման, ինչու չէ, նաև նոր նպատակների կառուցման գործում:

Իսկ համայնքի հիմնախնդիրների լուծման համար համայնքի ղեկավարը ջանալու է գտնել ելքեր, թեկուզև, հովանավորներ և միշտ տեղեկացնել մարզպետարանում համայնքի հիմնախնդիրների մասին:

*Համայնքի հիմնախնդիրները*

1. Գյուղի կենտրոնական ասֆալտապատ, մանուկների քարուքանդ վիճակը:
2. Ոռոգման ջրի ցանցի կառուցումը:
3. Մշակույթի տան շենքի վերանորոգումը:



Արձավիրի մարզի Գրիբոյեդովի  
գյուղական համայնքի ղեկավարի  
տարեկան գործունեության հաշվետվություն  
(2014թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների)

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության  
բնագավառում

2014թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում գյուղապետարան է դիմել համայնքի թվով 98 բնակիչ, որից 86-ը գրավոր, դիմումատուների հարցերին տրվել է լիարժեք պատասխան: Ստացվել է 214 գրություն և առաքվել է թվով 199 գրություն: Գյուղապետարանը նոտարական գրասենյակում, Ք.Կ.Ա.Գ.-ի բաժնում, անձնագրային բաժնում, կադաստրի տարածքային ստորաբաժնում միջնորդությամբ հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և անցկացվել է համայնքի բնակչության ամենամյա սեռա-տարիքային հաշվառում, կատարվել է համայնքապատկան հիմնարկներում ամենամյա գույքագրման աշխատանքներ:

Կայացել է համայնքի ավագանու 6 հերթական և 7 արտահերթ նիստ, որոնք ներկայացվել են մարզպետարան: Գյուղապետի կողմից կայացվել է տարբեր բնույթի 39 որոշումներ, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան:

Համայնքում կազմակերպվել է միջոցառումներ՝ Մարտի 8-ի, Մայիսի 9-ի, Մայիսի 28-ի, դպրոցում վերջին զանգի, սեպտեմբերի 1-ի և ուսուցչի տոնի կապակցությամբ:

2. Ֆինանսների բնագավառում

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի տարեկան բյուջեի նախագիծը, օրենքով սահմանված կարգով ապահովել և տնօրինել է համայնքի բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը: Հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել և մուտքագրվել է գույքահարկի մասով 4 656 670 դրամ, հողի հարկի մասով 7 280 820 դրամ և վարձակալական հողի մասով 725 290 դրամ, տեղական տուրք 83 000 դրամ, տեղական վճարներ՝ 210 000 դրամ: Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի, սոց վճարների և եկամտահարկերի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:



### 3. Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ: Ձին ծառայությունից խուսափողների քիվը հասցվել է նվազագույնի, ինչպես նաև աշխատանքներ է տարվում նախկինում զինծառայությունից խուսափողների հայտնաբերման և զինկոմիսարիատ ներկայացնելու գործում:

Աջակցվում և ուշադրության կենտրոնում են պահվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծումը: Աշխատանքներ են տարվում երիտասարդության շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

### 4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Անմիջական վերահսկողություն է սահմանվում համայնքի հողօգտագործողների նկատմամբ տարածքները նպատակային օգտագործման ուղղությամբ: Մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Համայնքային հողերի քարտեզագրման աշխատանքների համար ծախսվել է 293 400 դրամ:

Կատարվել է գյուղի Նար-Գոս փողոցի ջրատար առվի վրա խողովակի տեղադրման աշխատանքներ, որի համար ծախսվել է 128 000 դրամ:

### 5. Կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Համայնքում կատարվում է ամենշաբաթյա աղբահեռացում, որի համար կնքվել է ծառայությունների ձեռք բերման պայմանագիր /տարվա կտրվածքով/ 1 800 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Գյուղում կանգառի կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերման համար ծախսվել է 95 350 ՀՀ դրամ:

Կենտրոնական փողոցի լուսերի փոփոխման համար ծախսվել է 55 500 ՀՀ դրամ:

Կատարվել է գյուղի Խաչատրյան և Փափազյան փողոցների հարթեցման և խճապատման աշխատանքների համար ծախսվել է 400 000 ՀՀ դրամ:

Գյուղի կենտրոնական այգու լուսավորության վերանորոգման աշխատանքների իրականացման համար ծախսվել է 84 000 ՀՀ դրամ:

Համայնքի Թումանյան, Մկրտչյան և Մահարու փողոցներով անցնող ջրահեռացման ցանցի մաքրման աշխատանքների համար ծախսվել է 423 000 ՀՀ դրամ:

Կենտրոնական այգու բարեկարգման համար ձեռք է բերվել խոտհնձիչ 46 000 ՀՀ դրամ:

Գյուղի գերեզմանատան տարածքում զուգարանների կառուցման համար անհրաժեշտ նյութերի ձեռք բերման համար ծախսվել է 249 000 ՀՀ դրամ:

## 6. Տրանսպորտի բնագավառում

Գյուղապետարանի կողմից կատարվել է մասնակի ավագապատման և գյուղամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ:

## 7. Առևտրի և սպասարկման բնագավառում

Հսկողություն է սահմանվել արագ փչացող սննդի և առևտրային կանոնների խախտման նկատմամբ, ինչի մասին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում մարզպետարան:

Բացառվել է փողոցային վառելանյութի վաճառքը:

## 8. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Գյուղապետարանը համայնքի ավագանու որոշմամբ համայնքի ուսանողներին որպես ուսման վարձի աջակցություն և ճանապարհածախս տրամադրել է 240 000 ՀՀ դրամ:

Մարտի 8-ի՝ կանանց տոնի կապակցությամբ գյուղապետարանի աշխատակազմի աշխատող կանանց նվերներ գնելու համար հատկացվել է 68 000 ՀՀ դրամ:

Կանանց տոնի կապակցությամբ Գրիբոյեդով համայնքի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինակոչիկների մայրերին շնորհավորելու և նվերներ գնելու համար հատկացվել է 40 000 ՀՀ դրամ:

Համայնքի մանկապարտեզի ֆինանսավորման համար հատկացվել է 9 097 200 ՀՀ դրամ:

Հաղթանակի տոնի կապակցությամբ կազմակերպվել է հիշատակի տոն, որի համար հատկացվել է 159 500 դրամ:

Դպրոցն ավարտելու կապակցությամբ գյուղապետարանի կողմից շրջանավարտներին նվերներ գնելու համար հատկացվել է 138 900 դրամ:

Առաջին դասարանցիներին և դասվարին սեպտեմբերի 1-ի կապակցությամբ գյուղապետարանի կողմից նվերներ գնելու համար հատկացվել է 175 000 ՀՀ դրամ:

Ուսուցչի տոնի կապակցությամբ գյուղի ուսուցչական կոլեկտիվին նվերներ գնելու համար հատկացվել է 118 600 դրամ:



Ամանորի կապակցությամբ համայնքի նպաստառու ընտանիքներին նվերներ գնելու համար հատկացվել է 100 000 ՀՀ դրամ:

Ամանորյա տոնաձառի լույսերի ձեռք բերման համար ծախսվել է 28 900 ՀՀ դրամ:

### 9. Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սոցիալական ծառայության բնագավառում

Բուժ անձնակազմի և գյուղապետարանի մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելաջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցում: Համաճարակների կանխարգելման նպատակով կատարվում է ամենօրյա բակայցեր և տարվում է բացատրական աշխատանքներ: Համայնքում հրավիրվում են բժիշկ - մասնագետներ ազգաբնակչությանը ստուգելու, համապատասխան անվճար բուժումներ և խորհուրդներ տալու նպատակով:

Սոցիալապես 48 անապահով ընտանիքների տրվել է 1 560 000 ՀՀ դրամ որպես օգնություն:

### 10. Գյուղատնտեսության բնագավառում

Աշխատակազմի միջոցով կազմակերպվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել համայնքում անասնազրկաքանակի հաշվառման ամենամյա աշխատանքներ:

Տարածքային վիճակագրական վարչություն է ներկայացվել հունիսյան ցանրաշրջանառության, ամսական հաշվետվություն ցանրաշրջանառության, ինչպես նաև պտղատու և խաղողի այգիների ստացված բերքի, առկա գյուղտնտեսական վերաբերյալ հաշվետվություններ:

Համայնքում համաձայն գրաֆիկի կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

### Հիմնախնդիրներ

1. Գյուղի կենտրոնական ասֆալտապատ ճանապարհի քարուքանդ վիճակը:
2. Ոռոգման ջրի ցանցի կառուցում:
3. Մշակույթի տան շենքի վերանորոգումը:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ  
ՀԱՍՆՆԵՔԻ ՂԵԿՆՎԱՐ  
19.01.2015թ.



Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ